

ԿԱՐԾԻՔ

Միլվա Ալբերտի Մուրադյանի՝ «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը»՝ Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցմանը ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Բառերի կապակցելիության ուսումնասիրությունը՝ ժամանակակից լեզվաբանության կարևոր և առանցքային խնդիրներից մեկն է: Կառուցվածքային լեզվաբանության տեսանկյունից հատկապես ուշագրավ է բայերի կապակցելիության դասակարգումը: Ըստ Գ. Ջահուկյանի՝ «բայերի կապակցելիական դասակարգում ասելով պետք է հասկանալ բայերի դասակարգումը ըստ նախադասությունը կազմող բառերի և բառախմբերի հետ նրանց ունեցած կապակցելիության»¹: Գիտնականը բայերի երեք կարգի դասակարգում է առանձնացնում՝ դասանշային, արժույթային և ընտրությային: Արժույթը բայի կապակցելիությունն է ենթակայի, խնդիրների, ստորոգելիի, պարագաների հետ:

Հայտնի է, որ «արժույթ» տերմինը առաջին անգամ կիրառել է ֆրանսիացի լեզվաբան Լյուսիեն Տենիերն իր «Կառուցվածքային շարահյուսության հիմունքները» աշխատության մեջ: Նա նախադասության գերադաս անդամ է համարում բայական հանգույցը, իսկ ենթական ու խնդիրները դիտարկում որպես ստորադաս անդամներ՝ անվանելով ակտանտ: Ըստ բայի հետ կապվող տարբեր բնույթի միավորների քանակի՝ առանձնացվում են արժույթագուրկ, միարժույթ, երկարժույթ, եռարժույթ և բազմարժույթ բայեր: Արժույթագուրկ են դիմասահմանափակ, այն է՝ միադիմի բայերը, միարժույթ՝ անանցողական բայերը, այսինքն՝ վիճակային բայերը, երկարժույթ են անցողական բայերը, իսկ եռարժույթ բայերի համար պարտադիր է երեք առարկա:

¹Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 461:

Հետագա լեզվաբանները, ենթակայից ու խնդիրներից բացի, որպես արժույթի արտահայտության դրսևորումներ են դիտարկում պարագաները, ստորոգելին, նաև կոչականը /նշենք, որ կոչականատությունը մնացած արժութատություններին հավելվել է պրոֆ. Գ. Խաչատրյանի կողմից/:

Սույն ատենախոսության մեջ փորձ է արված արժևորելու արևելահայերենի անցողական բայերի կապակցելիությունը՝ խարսխվելով բառային, ձևաբանական և շարահյուսական մակարդակների փոխկապակցվածության վրա: Աշխատանքում ատենախոսը ոչ միայն դասակարգել է անցողական բայերը՝ ըստ արժութային առանձնահատկությունների, այլև կատարել է այդ բայերի դասանշային տարբերակում: Դրանից զատ՝ քննել է կազմությամբ բաղադրյալ բայերի արժույթը՝ ըստ ներքերականական արտահայտության /բաղադրյալ ասելով նկատի ունի բարդ՝ մի քանի արմատներից կազմված /օր.՝ լուսանկարահանել/ և նախածանցավոր /օր.՝ առկայծել/ բայերը/: Հեղինակը փորձել է նոր տեսանկյունից մեկիկ- մեկիկ ներկայացնել բայերի ենթակատությունը, ստորոգատությունը, կոչականատությունը, խնդրատությունն ու պարագատությունը:

Ավելորդ համարելով անդրադառնալ խնդրո առարկա ուսումնասիրության կառուցվածքին և գլուխների համառոտ նկարագրությանը՝ ներկայացնենք կատարված աշխատանքի հիմնական արժանիքները՝

1. Իմաստաբանական և քերականական մակարդակներում անցողական բայերի կապակցելիությունը ատենախոսը քննել է նոր տեսանկյունից՝ որպես սկզբնաղբյուր ունենալով «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը», ներկայացրել բայի արժույթի փոփոխություններ առաջացնող լեզվական միջոցները: Արդյունքում սեղանին է դրվել ժամանակակից հայերենի անցողական բայերի արժույթը համալիր ներկայացնող մի ամփոփ աշխատանք:

2. Աշխատանքի կարևոր արժանիքներից մեկն այն է, որ հեղինակի ուշադրության կենտրոնում ոչ միայն պարզ հիմքով բայերի արժույթի քննությունն է եղել, այլ նաև բարդ, ածանցավոր բայերի թե՛ ձևային, թե՛ բովանդակային քննությունը:
3. Հեղինակը, քաջատեղյակ լինելով բայերի արժույթին նվիրված կամ առնչվող՝ հայ և օտար լեզվաբանների հին ու նոր աշխատություններին /Շ. Բալլի, Դ. Ալերթոն, Լ. Տենիեր, Կ. Բյուլեր, Ս. Կացնելսոն, Ա. Գլադիլին, Ա. Յենսեն, Թ. Հերսթթ, Յու. Ապրեսյան, Է. Աթայան, Գ. Ջահուկյան, Հ. Հարությունյան, Ս. Գյուլբուդադյան, Ռ. Իշխանյան, Գ. Խաչատրյան, Դ. Գյուլգատյան և այլք/, բառերի կապակցելիության վերաբերյալ դիտարկումներ գտնելով դեռևս մեկնիչ- քերականների հայագիտական աշխատություններում /Վ. Արևելցի, Ֆ. Ռիվոլա, Կ. Գալանոս, Ռ. Երևանցի, Ս. Ջուղայեցի, Ս. Սեբաստացի.../, խորապես յուրացրել է նյութը և այն օգտագործել որպես ստաղծ:
4. Անգլերենին լավ տիրապետելու շնորհիվ կատարելով հայերենի և անգլերենի բայերի արժույթի գուգադրական քննություն՝ ստացված արդյունքներով հրնթացս հարստացրել և հիմնավորել է իր ասելիքը:
5. Առավել հաջողված և բազմաշերտ քննության է ենթարկված աշխատանքի հինգերորդ գլուխը, որում անցողական բայերի խնդրատությունը ներկայացված է սպառիչ, մանրակրկիտ և խորությամբ:
6. Ս. Մուրադյանը շատ դեպքերում լեզվական իրողությունների սուկ արձանագրող չէ. նա արևելահայերենի անցողական բայերի արժույթը քննում է վերլուծական եղանակով՝ չխուսափելով երբեմն հակադրվել անվանի լեզվաբանների կարծիքներին:
7. Հետևելով հստակ ըմբռնումների և որդեգրած սկզբունքների՝ ատենախոսը կարողացել է հասնել գիտական անհրաժեշտ եզրահանգումների, ինչպես նաև կատարել կարևոր ընդհանրացումներ:

8. Վերլուծությունները հավաստի դարձնելուն են միտված գեղարվեստական գրականությունից, հանրագիտարանից, ԱՐԵՎԱԿ-ից քաղված բազմաթիվ և բազմապիսի օրինակները:

Ինչպես ցանկացած գիտական ուսումնասիրություն, սույն ատենախոսությունը ևս գերծ չէ որոշակի վրիպումներից, բացթողումներից, որոնք գրեթե չեն սովորում կատարված հսկայական աշխատանքը, և որոնք նշում ենք աշխատանքը առավել անթերի և կատարյալ տեսնելու անկեղծ ցանկությամբ միայն: Ահավասիկ դրանցից մի քանիսը, թերևս ամենից կարևորները:

1. Անհամամասնություն է նկատվում ատենախոսության գլուխների միջև ծավալային առումով. ներկայացված կառուցվածքով աշխատանքն ունի 6 գլուխ, որից 1-ինը 9 էջ է, 2-րդը՝ 11, 3-րդը՝ 4, 4-րդը՝ 5, 6-րդը՝ 10, իսկ 5-րդը՝ 65, այսինքն՝ 5 գլուխները միասին /ընդամենը 39 էջ/ ավելի քիչ ծավալ ունեն, քան 5-րդ գլուխը՝ առանձին վերցրած: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ երկրորդ, երրորդ, չորրորդ և վեցերորդ գլուխները /սա առաջարկվող մի տարբերակ է/ միավորել մեկ գլխի մեջ՝ որպես առանձին ենթագլուխներ, հինգերորդ գլուխը տրոհել երկու գլուխների՝ դիցուք՝ «Կազմությամբ բաղադրյալ բառերի խնդրատական արժույթը» հատվածը դարձնելով առանձին գլուխ: Իսկ «Հայերենի բայերի արժույթայնության ընդհանուր բնութագիրը» խորագիրը վերտառությամբ 1-ին գլուխը, ըստ մեզ, ավելի նպատակահարմար կլիներ ներկայացնել ներածության բաժնում:

2. 4.1, 4.2, 5.1, 5.2 ենթագլուխները համապատասխանաբար վերնագրված են *Ներգործական սեռի բայերի կոչականատությունը, Պատճառական բայերի կոչականատությունը, Ներգործական սեռի բայերի խնդրատությունը, Պատճառական բայերի խնդրատությունը*: Այն տպավորությունն է ստեղծվում, կարծեք պատճառական բայերը ներգործական սեռի չեն: Անհրաժեշտ էր ուղղակի հիշյալ բայերի խմբերը կոչել պարզ կազմության ներգործականներ և բաղադրյալ կազմության ներգործականներ կամ պարզապես պատճառական բայեր:

3. Շփոթի տեղիք է տալիս 45-րդ էջի հետևյալ ձևակերպումը. «Պատճառական բայերը, բացառությամբ որոշ բայերի /բզզացնել, խրինջացնել և այլն/ անձնանիշ ենթակայի հետ կապակցվելու կարողություն են հանդես բերում...»: Բերված օրինակները ոչ թե պատճառական բայեր են, այլ պատճառական ածանց ունեցող:

Էջ 62-ում էլ պատճառականների կողքին սպրդել է *հատկացնել* բայը:

4. Դիմավոր բայ+ անորոշ դերբայ կադապարում հեղինակը, ցուցաբերելով անհետևողականություն, մի տեղ անորոշ դերբայով արտահայտված անդամը համարում է ստորոգելի՝ «...կամենում են կործանել...», «...մոռացա հարցնել...» /էջ 40/, մի այլ տեղ՝ ուղիղ խնդիր. « սկսում էին նրան գրպարտել... », «...կցանկանան քննություն հանձնել...» /տե՛ս էջ 58/ :

5. Էջ 69-ում աստենախոսը մի շարք բայերի շարքում **խմեցնել-ը** և **ուտեցնել-ը** համարում է սկզբնատիպ չեզոք սեռի բայեր, մինչդեռ դրանց սկզբնատիպերը ներգործական սեռի են:

6. Էջ 103-ում *-որդ* վերջածանցով բայ է համարված *երրորդել-ը*:

7. Ըստ մեզ՝ եզրակացություններից երկրորդը ավելորդ է /« *Արժույթ* լեզվաբանական հասկացությունը արժևորվել է տարբեր լեզվաբանների կողմից, որոնք, կարևորելով խոսքի կապակցական առանձնահատկությունները, սահմանել են շարահյուսական կադապարների հնարավոր ստորադասական սահմանները» /: /էջ 121/

8. Երբեմն ենթազույններում թվանշաններով առանձնացված կետերն ու ենթակետերը այնքան շատ են , հաճախ անհարկի, որ շփոթեցնում են ընթերցողին: Կարելի էր դրանց մի մասը միավորել, մի մասն արտահայտել այբուբենի տառերով՝ առավել հստակություն մտցնելու նպատակով /տե՛ս էջ 88-95, 61 և այլն/:


9. Օգտագործված գրականության ցանկում գիտական հոդվածները ներկայացված են հիմնական տեսական աղբյուրների՝ մենագրությունների, դասագրքերի հետ միախառնված: Ըստ կարգի՝ դրանք պետք է հաջորդեին վերջիններիս՝ առանձին շարքով:

Ինչևիցե, վերոբերյալ թերացումներն ու դիտարկումները ամենևին չեն նսեմացնում հեղինակի՝ գիտական բարեխղճությամբ և նյութի լիարժեք իմացությամբ կատարած աշխատանքը:

Ատենախոսությունը շարադրված է գիտական պատշաճ մակարդակով, ունի տրամաբանական կառուցվածք, առաջադրված խնդիրները լուծված են հետևողականորեն, օգտագործված է լեզվաբանական հարուստ նյութ (տե՛ս օգտագործված գրականության ցանկը): Յուրաքանչյուր գլուխ ավարտվում է եզրակացություններով, ատենախոսության վերջում արված եզրակացությունները բխում են քննության բուն նյութից և ամփոփում կատարված աշխատանքը: Սեղմագրում ներկայացված դրույթները համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը, հրապարակված հոդվածները լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Այսպիսով, Սիլվա Մուրադյանի՝ «Ժամանակակից արևելահայերենի անցողական բայերի արժույթը» ատենախոսությունը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից Ժ.02.01. թվանիշով «Հայոց լեզու» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությանն առաջադրվող պահանջներին:


Հաշվի առնելով վերոգրյալը՝ միջնորդում եմ ԲՈԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող 019 մասնագիտական խորհրդին՝ ատենախոսության հեղինակ Սիլվա Ալբերտի Մուրադյանին շնորհելու իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝  Աննա Աբաջյան

Հաստատում եմ ստորագրությունը՝

ԵՊՀ գիտքարտուղար՝



 Լ. Հովսեփյան

15. 09. 2021